ԱՐՄԵՆ ԱՐՏԵՄԻ ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

Մանր ու երկարատև հիվանդությունից հետո վախճանվեց ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Արմեն Արտեմի Մուրվալյանը։

Մուրվալյանը ծնվել է 1910 թ. Վրաց. ՍՍՀ Սղնախի քաղաքում։ Միջնակարգ կրթությունը ստանալով Թբիլիսիում, 1933—38 թթ. ընթացքում սովորում և հաջողությամբ ավարտում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ապա ընդունվում Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Վրացագիտություն» մասնագիտությամբ։ Նրա «Քերականական կատեգորիաները հայոց և վրաց լեզուներում» թեկնածուական դիսերտացիան արդեն պատրաստ էր հրապարակային պաշտպանության, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։

1942 թ. Ղրիմի մարտերում ծանր վիրավորվելուց և հոսպիտալում ապաքինվելուց հետո Մուրվալյանը, որպես հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ, զորացրվում է բանակից, 1943 թ. հաջողությամբ պաշտպանում թեկնածուական դիսերտացիան և աշխատանքի անցնում ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում։ Այդ տարիներին նրա հետաքրքրության կենտրոնում էին հատկապես՝ հայոց և վրաց լեզուների համադրական և համեմատական ուսումնասիրության հարցերը։ «Հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները» դիսերտացիայի պաշտպանությամբ 1948 թ. նրան շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ Սակայն Մուրվալյանի գիտական գործունեությունը ավելի լայն ասպարեզ է ստանում 50-ական թվականներին, երբ նա ամբողջովին նվիրվում է հայերենի բառապաշարի, նրա քերականական կառուցվածքի հարցերի ուսումնասիրությանը։ Այս տեսակետից հատկապես արժեքավոր են նրա «Հայոց լեզվի բառային կազմը» (1955 թ.) և «Հայոց լեզվի դարձվածաբանությունը և բայակազմությունը» (1959 թ.) մենագրական աշխատությունները։

Մուրվալյանը հաջողությամբ զբաղվում էր նաև բառարանագրությամբ։ Չնայած իր վատառողջ վիճակին, ժամանակին ավարտեց և խմբագրության հանձնեց հայերեն բացատրական բառարանի իրեն հանձնարարված բաժինը և շարունակում էր աշխատել վրացերեն-հայերեն բառարանի վրա։

Աշխատասեր, գիտության սնխոնջ մշակ, իր ամբողջ էությամբ նվիրված միայն մի նպատակի՝ սրբությամբ ծառայել հայրենական գիտությանը՝ այսպիսին էր Արմեն Մուրվալյանը և այդպիսին էլ կմնա բոլորիս հիշողության մեջ։

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՀՍՍՀ ԳԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ